



[168083]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 11 » Նոյեմբեր 2016 թ.

N35Ա/1

**ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ  
ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՅԱԿԱՐԳԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրության 12-րդ կետի «դ») ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 2-րդ կետը.

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

**1. Սահմանել**

1) միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի կատարման ընթացիկ մշտադիտարկման և գնահատման հաշվետվության ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի կատարման ընթացիկ մշտադիտարկման և գնահատման ամփոփ հաշվետվության ձևը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի կատարման ընթացիկ մշտադիտարկման և գնահատման արդյունքների մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային կենտրոնների, Զբաղվածության պետական գործակալության տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների, Հայաստանի

Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Զերմուկի քաղաքային համայնքների) աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների (բաժինների) պետերին և խնամք տրամադրող սոցիալական պաշտպանության հաստատությունների, կացարան տրամադրող կազմակերպությունների տնօրեններին (այսուհետ՝ համագործակցող կողմ հանդիսացող կազմակերպության ղեկավարներ)՝ մինչև **հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը**, համապատասխանաբար, նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայություն, նախարարության Զբաղվածության պետական գործակալություն, Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննական գործակալություն, նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի, ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի և սոցիալական աջակցության վարչություններ ներկայացնել հաշվետվություն՝ համաձայն սույն հրամանի N1 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության պետական ծառայության, Զբաղվածության պետական գործակալության, Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննական գործակալության, Նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության, ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության և սոցիալական աջակցության վարչության պետերին՝ տարածքային մարմիններից, խնամք կամ կացարան տրամադրող կազմակերպություններից ստացված հաշվետվություններն ամփոփել և գնահատել համաձայն սույն հրամանի N 2 հավելվածի և մինչև **հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 20-ը** ներկայացնել աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչություն, իսկ հաշվետվություններում վերհանված խնդիրների, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների վերաբերյալ տեղեկանքը ներկայացնել նախարարի՝ համապատասխան բնագավառը համակարգող տեղեկակիին՝ այն քննարկելու և համապատասխան ընթացք տալու նպատակով:

4. Նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության պետին՝ մինչև **հաշվետու տարվան հաջորդող տարվա մարտի 25-ը**.

1) ամփոփել սույն հրամանի 3-րդ կետի համաձայն ստացված տեղեկատվությունը և սույն հրամանի N 3 հավելվածի ձևաչափով կազմված և սոցիալական պաշտպանության բնագավառում մոնիթորինգի և գնահատման գործընթացը համակարգող նախարարի տեղակալի հետ համաձայնեցված տեղեկանքը ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին,

2) գնահատել որոշման հավելվածի 33-րդ կետով սահմանված կարգով ստացված մշտադիտարկման ամփոփված արդյունքները և դրանք, համաձայնեցնելով սոցիալական պաշտպանության բնագավառում մոնիթորինգի և գնահատման գործընթացը համակարգող նախարարի տեղակալի հետ, ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ որոշմամբ սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնելու նպատակով:

5. Սույն հրամանի կատարման նկատմամբ պատասխանները վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին:



Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

**Հաշվետվություն\***

«-----»-----201-- թ. դրությամբ միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի կատարման ընթացիկ մշտադիտարկման և գնահատման

Համագործակցության կողմ հանդիսացող կազմակերպության անվանումը -----

Հասցեն, հեռախոսահամարը, էլ. հասցեն -----

Մշտադիտարկման հիմնական ցուցանիշները		ՀՀ կառավարության 10.09.2015թ. N 1044-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 5-րդ կետով թվարկված խնդրահարույց դեպքերը																				Գնահատական**
		3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23
1	Հայտնաբերված խնդրահարույց դեպքերի թիվը																					
2	Համապատասխան մասնագետի բազմամասնագիտական խմբի աշխատանքներին (դեպքերի թիվը)																					
3	Տարածքային (տեղական) մակարդակում ձևավորված համակարգող և խարիրդատվական մարմինների թիվը																					
4	Տարածքային (տեղական) մակարդակում կնքված տարածքային (տեղական) համագործակցության մասին համաձայնագրերի թիվը																					
5	Հայտնաբերված խնդրահարույց դեպքի վերաբերյալ միջգերատեսչական հարցման պատասխանի տրամադրման ժամկետների խախտման դեպքերի թիվը																					

\* Ազատ տեքստով ներկայացնել միջգերատեսչական համագործակցության ընթացքում առաջացած ընթացիկ խնդիրները՝ ներկայացնելով նաև դրանց լուծման առաջարկությունները  
 \*\* Լրացվում է հիմանի 3-րդ կետով սահմանված ստորաբաժանումների կողմից (մշտադիտարկման հիմնական 2-ից 4-րդ ցուցանիշների արժեքների 0-ական հանրագումարի դեպքում գնահատվում է անբավարար)

**Ամփոփ հաշվետվություն \***

«-----»-----201-- թ. դրությամբ միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի կատարման ընթացիկ մշտադիտարկման և գնահատման

Նախարարության ստորաբաժանման անվանումը

ՀՀ կառավարության 10.09.2015թ. N 1044-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 5-րդ կետով թվարկված խնդրահարույց դեպքերը

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	Գնահատված հաշվետվությունների ընդհանուր թիվը, որից	
																						անբավարար գնահատված	բավարար գնահատված
1	Հայտնաբերված խնդրահարույց դեպքերի թիվը																						
2	Համապատասխան մասնագետի մասնակցությունը բազմամասնագիտական խմբի աշխատանքներին (դեպքերի թիվը)																						
3	Տարածքային (տեղական) մակարդակում ձևավորված համակարգող և խարհրդատվական մարմինների թիվը																						
4	Տարածքային (տեղական) մակարդակում կնքված տարածքային (տեղական) համագործակցության մասին համաձայնագրերի թիվը																						
5	Հայտնաբերված խնդրահարույց դեպքի վերաբերյալ միջգերատեսչական հարցման պատասխանի տրամադրման ժամկետների խախտման դեպքերի թիվը																						

\* Ազատ տեքստով ներկայացնել միջգերատեսչական սոցիալական համագործակցության ընթացքում առաջացած ընթացիկ խնդիրները՝ ներկայացնելով նաև դրանց լուծման առաջարկությունները

**Տեղեկանք**

«-----»-----201---թ. դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի կատարման ընթացիկ մշտադիտարկման և գնահատման արդյունքների

1	2	3	4	5	6	7	8
	Համագործակցող կողմի անվանումը	Հայտնաբերված խնդրահարույց դեպքերի թիվը	Համապատասխան մասնագետի մասնակցությունը բազմամասնագիտական խմբի աշխատանքներին (դեպքերի թիվը)	Տարածքային (տեղական) մակարդակում ձևավորված համակարգող և խարհրդատվական մարմինների թիվը	Տարածքային (տեղական) մակարդակում կնքված տարածքային (տեղական) համագործակցության մասին համաձայնագրերի թիվը	Հայտնաբերված խնդրահարույց դեպքի վերաբերյալ միջգերատեսչական հարցման պատասխանի տրամադրման ժամկետների խախտման դեպքերի թիվը	Գնահատականը (բավարար/անբավարար)*
1	Սոցիալական ապահովության տարածքային կենտրոններ						
2	Զբոսաշրջության տարածքային կենտրոններ						
3	Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներ						
4	Խնամք տրամադրող սոցիալական պաշտպանության հաստատություններ						
5	Կացարան տրամադրող կազմակերպություններ						
6	ՀՀ մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Զերնուկի քաղաքային համայնքների) աշխատակազմերի սոցիալական աջակցության տարածքային						

\* Բավարար գնահատականը տրվում է գնահատված հաշվետվությունների ընդհանուր թվի 50 և ավելի տոկոս բավարար գնահատականի դեպքում